Հաշվետվություն

2022 թվականի հոկտեմբերի 17-ից 20-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Էսսեն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան
   Գևորգ Սարդարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար
   Կադաստրի կոմիտեի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ-գլխավոր հաշվապահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, (Էսսեն), հոկտեմբերի 17-ից 20-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Թրիմբլ (Trimble) ընկերություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Մասնակցություն «Ինտերգեո 2022» ցուցահանդես-համաժողովին,
   - Մասնագիտական փորձի փոխանակում:

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Արբանյակային նավիգացիոն համակարգը և առօրյայում դրա կիրառումը,
   - Շենքի տեղեկատվական մոդելը ենթակառուցվածքի համար. «Թվայինի վրա հիմնված աշխատանքային գործընթացներ՝ օգտագործելով Trimble Access, Quadri և SiteVision ծրագրային փաթեթները,
   - Քաղաքային կառավարում, շենքերի անվտանգություն, քաղաքներն ավելի խելացի դարձնելու և խելացի քաղաքներ նախագծելու համար տարբերակների որոնում,
   - Ռոբոտաշինության լազերային սկանավորում. 3D լազերային սկանավորման ցուցադրություն,
   - «Լազերային սկանավորման և թվային պատկերների առավելությունները մոնիտորինգի հավելվածներում»,
   - «3D մոդելի տվյալների օգտագործումը տեղադրելու և ստուգելու արտադրական գործընթացը՝ արտադրողականությունը և որակը բարելավելու համար»:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Վերոնշյալ միջոցառմանը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն ներկայացրել է կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը և կոմիտեի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ-գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյանը: Մասնագիտական քննարկումներ են տեղի ունեցել Հեքսագոնի

(Hexagon - սենսորների, ծրագրային ապահովման և ավտոմատացված լուծումների համաշխարհային առաջատար), Էսրիի (Esri- աշխարհագրական տեղեկատվական համակարգերի արտադրող), ինչպես նաև Թրիմբլ (Trimble) ընկերությունների ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ քննարկվել են ծրագրային փաթեթների առանձնահատկությունները, Հայաստանում դրանց կիրառելիության հեռանկարները, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները (եթե ունեցել ենք պայմանավորվածություններ), ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որոշումներ կամ այլ հարակից փաստաթղթեր չեն կազմվել և չեն ստորագրվել: Թրիմբլ ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրենց ընկերության հաշվին Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչներին ընթացիկ տարվա նոյեմբերին հրավիրելու Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ծրագրային փաթեթների նվիրաբերման հետ կապված հարցերը քննարկելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

Միջոցառումն անցկացվել է համաժողովի և ցուցահանդեսի ձևաչափով: Ցուցահանդեսն իր հերթին անցկացվել է 2 փուլով՝ մասնակիցների ուշադրությունը բևեռելով դրոնների (drone), խելացի քաղաքների (Smart cities), տեղեկատվական մոդելի ստեղծման (BIM) և գեոինովացիաների վրա: Միջոցառման ընթացքում շրջայց է կատարվել աշխարհահռչակ կազմակերպությունների տաղավարներ, որտեղ հնարավորություն է եղել ծանոթանալու մասնագիտական ոլորտի նորարարություններին և առաջադեմ տեխնիկական լուծումներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան
Գևորգ Սարդարյան

24.10.2022 թ.